# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**08 հուլիսի 2014 թվականի N 295-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 430-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2012 թվականի հոկտեմբերի 25-ի <<Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփական իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման) մրցույթն անցկացնող մրցութային հանձնաժողովի անդամության թեկնածուների ցանկը հաստատելու մասին>> N 430-Ա որոշման 1-ին կետով հաստատված հավելվածը՝ (ցանկը) շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**2014 թվականի հուլիսի 8**
**ք. Հրազդան**

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ
2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 8-Ի N 295-Ա ՈՐՈՇՄԱՆ

<<ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ
2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 430-Ա ՈՐՈՇՄԱՆ

# ՑԱՆԿ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՐՅՈՒՐ ՏՈԿՈՍ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ (ՆՇԱՆԱԿՄԱՆ) ՄՐՑՈՒՅԹՆ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ

| Հ/Հ | ԱԶԳԱՆՈՒՆԸ, ԱՆՈՒՆԸ | ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ |
|---|---|---|
| 1 | *Հարությունյան Արամ* | Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետ |
| 2 | *Բակլաչյան Վալերիկ* | Մարզպետի տեղակալ |
| 3 | *Մարգարյան Կարեն* | Մարզպետի տեղակալ |
| 4 | *Ղազարյան Ալբերտ* | Մարզպետի տեղակալ |
| 5 | *Գարեգինյան Մարգալիտ* | Աշխատակազմի ղեկավար |
| 6 | *Հովհաննիսյան Էլզա* | Աշխատակազմի ղեկավարի տեղակալ |
| 7 | *Պապոյան Կարեն* | Մարզպետի խորհրդական |
| 8 | *Նահապետյան Լադիկ* | Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ |
| 9 | *Խաչատրյան Արշավիր* | Քաղաքաշինության վարչության պետ |
| 10 | *Եղիազարյան Մհեր* | Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ |
| 11 | *Կարապետյան Հովհաննես* | Կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ |
| 12 | *Մարտիրոսյան Գայանե* | Առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ |
| 13 | *Հակոբյան Սամվել* | Տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ |
| 14 | *Բուրուշյան Ջուլիետա* | Քարտուղարության պետ |
| 15 | *Մարգարյան Նաիրա* | Զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ |
| 16 | *Պետրոսյան Լևոն* | Հողաշինության և հողօգտագործման բաժնի-մարզային հողային պետական տեսչության պետ |
| 17 | *Պետրոսյան Արտյուշ* | Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ |
| 18 | *Նազոյան Վահագն* | Անձնակազմի կառավարման բաժնի պետ |
| 19 | *Օհանյան Արմեն* | Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ |
| 20 | *Հունանյան Կամիլլա* | Ներքին աուդիտի բաժնի պետ |

>>: